“ ECONOMICS AUDIT ” LLC

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն «ՀՈՐԻԶՈՆ -95» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2025թ.

" ECONOMICS AUDIT " LLC

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7.
Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՀՈՐԻԶՈՆ -95» Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերություն

Մեր կողմից իրականացվել է ,ՀՈՐԻԶՈՆ -95ե Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ Կազմակերպություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփականատիրոջ սեփական կապիտալում փոփոխությունների – դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նա– ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի – նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ – իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների(ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք հաստատվել ենք որպես Ընկերության աուդիտորներ 2026թ. ապրիլի 03-ին և այդպիսով չենք հետևել տարվա վերջի պաշարների փաստացի գույքագրմանը: Մենք ի վիճակի չենք եղել այլընտրանքային միջոցներով համոզվել 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ առկա մնացորդների վերաբերյալ, որը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում է 417,655 հազ. դրամ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինասական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Ընկերությունից համաձայն Հաշվապահների վարքագրքի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի կանոնագրքի (ՀՄԴ-ի կանոնագիրք) – Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, – մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը այդ հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել է Վերապահումով կարծիք:

Ղեկավարության – կառավարման օղաներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար.

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման – ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նա- գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետ-աքով ֆինասականան հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նա- ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետ-անքով – համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգատագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականցվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն – պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում – գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետ-անքով էական խեղաթյուրման ռիսկերը,նախագծում – իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, – ձեռք ենք բերում բավականչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետ-անքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր

բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նա- ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների – համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրափակումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդահատության սզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ – ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետ-ություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:
  Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձ-ափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնաված են մինչ- մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամնքները կարեղ են հանգեցնել նրան, որ Կազմակերպությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը – բովանդաուկությունը, ներառյալ բացահայտումները – արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձ-ով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների – ժամկետների, ինչպես նա- աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կար-որ թերությունները:

2026 թ. Մայիսի 12

Տնօրեն

Աուդիտոր Ն.Մխիթարյան

«ՀՈՐԻԶՈՆ -95»ՍՊԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծան	31.12.2025թ	31.12.2024թ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4.1	2 078 533	2 002 527
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		91 462	91 462
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2 169 995**	**2 093 989**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	4.2	417 655	678 257
Տրված փոխառություններ		261 325	267 953
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.3	1 306 420	2 523 446
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ		0	0
Դրամական միջոցներ	4.4	19 453	26 981
Այլ ընթացիկ ակտիվներ		11 297	11 297
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2 016 150**	**3 507 934**
Ընդամենը ակտիվներ		**4 186 145**	**5 601 923**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	**4.5**	390 140	390 140
Էմիսիոն եկամուտ	**4.5**		
Կուտակված շահույթ	**4.5**	1 631 052	1 564 334
Պահուստային կապիտալ	**4.5**		
Ընդամենը սեփական կապիտալ		**2 021 192**	**1 954 474**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	**4.6**	1 446 314	848 616
Առևտրական և այլ կերդիտորական պարտքեր	**4.7**	712 878	2 768 038
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		5 761	28 511
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով			
Պահուստներ այլ պարտավորությունների և ծախսումների գծով			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**2 164 953**	**3 647 449**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**4 186 145**	**5 601 923**

Տնօրեն՝ *Ա. Խաչատուրյան*

Գլխ.հաշվապահ՝ *Գ. Դավթյան*

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ ապրիլի 22 -ին

«ՀՈՐԻԶՈՆ -95» ՍՊԸ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասինհաշվետվություն

2025թ դեկտեմբերի 31-իդրությամբ

Հազ.դրամ

Ծան.		2025թ.	2024թ.
Հասույթ	**4.8**	2 890 162	3 453 926
Վաճառքի ինքնարժեք	**4.9**	2 335 435	2 318 244
Համախառն շահույթ (վնաս)		**554 727**	**1 135 682**
Այլ եկամուտ	**4.10**	5 980	12 476
Իրացման ծախսեր	**4.11**		
Վարչական ծախսեր	**4.11**	271 415	330 187
Այլ ծախսեր	**4.11**	33 466	531 663
Գործառնական գործունեությունից շահույթ /վնաս/		**263 949**	**286 308**
Ֆինանսական ծախսեր	**4.12**		
Շահույթ (վնաս) մինչև հարկելը		**263 949**	**286 308**
Շահութահարկի գծով ծախս(փոխհատուցում)	**4.13**	47 511	61 195
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ)		**208 315**	**225 113**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**208 315**	**225 113**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած բազային շահույթ /վնաս/			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած նոսրացված շահույթ /վնաս/			

Տնօրեն *Ա. Խաչատուրյան*
Գլխ.հաշվապահ՝ *Գ. Դավթյան*

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ ապրիլի 22 -ին

<<ՀՈՐԻԶՈՆ-95>>ՍՊԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատումից պահուստներ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	390 140				1 809 221	2 199 361
Մնացորդի ուղղում						
Տարվա շահույթ (վնաս)					225 113	225 113
Բաժնետոմսի թողարկում						
Ներքին շարժ						
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահաբաժին					(470 000)	(470 000)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	390 140				1 564 334	1 954 474
Մնացորդի ուղղում						
Տարվա շահույթ (վնաս)					208 315	208 315
Բաժնետոմսի թողարկում						
Ներքին շարժ						
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահաբաժին					(141 597)	(141 597)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	390 140				1 631 052	2 021 192

Տնօրեն՝ *Ա. Խաչատուրյան*
Գլխ.հաշվապահ՝ *Գ. Դավթյան*

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ ապրիլի 22 -ին

<<ՀՈՐԻԶՈՆ-95>>ՍՊԸ			
Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ			
31 դեկտեմբերի 2025թ ավարտվող տարվա			
			Հազար Դրամ
	2025թ դեկտեմբերին 31-ին ավարտված տարի		2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեություն			
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	26 981		36 708
Ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցներ	2 942 488		4 117 932
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	514		2 300
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցներից մուտքեր	**2 943 002**		**4 120 232**
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր			
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	1 714 323		1 570 990
Վճարումներ աշխատակիցներին	775 766		840 588
Վճարումներ բյուջե	623 488		750 030
Վճարումներ շահութահարկի գծով	70 260		36 402
Այլ Վճարումներ	60 342		5 669
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	**3 244 179**		**3 203 679**
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**(301 177)**		**916 553**
Ներդրումային գործունեություն			
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր			
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր			155 200
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	290		6 584
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	**290**		**161 784**
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր	127 473		41 099
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	**127 473**		**41 099**
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**(127 183)**		**120 685**
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր	1 567 350		56 000
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	**1 567 350**		**56 000**
Ստացված վարկերից և փոխառություններից ելքեր	983 054		656 363
Վճարված շահաբաժիններ, տոկոսներ, այլ ելքեր	161 153		446 500
Ընդամենը Ֆինանսական գործունությունից ելքեր	1 144 207		1 102 863
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**423 143**		**(1 046 863)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(5 217)**		**(9 625)**
Արտարժույթի փոխարժեքից տարբերություններ	**(2 311)**		**(102)**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	**19 453**		**26 981**

Տնօրեն *Ա. Խաչատուրյան*

Գլխ. հաշվապահ՝ *Գ. Դավթյան*

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ ապրիլի 22 -ին

«ՀՈՐԻԶՈՆ -95»ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

1. Տեղեկատվություն ընկերության մասին

«ՀՈՐԻԶՈՆ -95 ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 1993թ. և հանդիսանում է «Երարդշին» շինարարական տրեստի իրավահաջորդը:

Ընկերությունը հանդիսանալով տրեստի ունեցվածքային իրավունքների և պարտականությունների իրավահաջորդը, իր գույքի բացառիկ սեփականատերը և դրա նկատմամբ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը իրականացնում է իր կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Գործունեության հիմնական տեղակներն են՝

- Արտադրական, հասարակական, բնակելի, հոգևոր ու մշակութային օբյեկտների կառուցման և վերակառուցման աշխատանքների իրականացում

Ընկերության գտնվելու վայրն է՝ ք.Երևան, Բյուզանդի փող. 99 շենք, 28 տարածք:

Ընկերության աշխատողների քանակը 2023թ. Դեկտեմբերի վերջին կազմում է 276 մարդ (2022թ. 250 մարդ)

2. Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական գրանցումների հիման վրա՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն ներկայացնելու նպատակով:

ՖՀՄՍ -ները Ֆինանասկան Հաշվետվութվությունների Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից ընդունված Ստանդարտները և մեկնաբանություններն են, որոնք ներառում են.

- Ֆինանասկան Հաշվետվութվությունների Միջազգային Ստանդարտները (IFRS)
- Հաշվապահական հաշվառման Միջազգային Ստանդարտները (IAS)
- Մեկնաբանությունները՝ թողարկված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Մեկնաբանությունների Կոմիտեի կողմից:

2.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

2.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական գործիքների, օգուտների և վնասների միջոցով արտահայտվող ներդրումների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումների, որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով:

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն (դրամ) է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Դրամով ներկայացված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազարների ճշտությամբ:

2.5.Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ համապատասխան կազմման համար Ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ներկայացման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ ՖՀՄՍ) և կիրառվում է սկզբնական արժեքի հիմունքը բացառությամբ, որոշ վերագնահատված ակտիվների և ֆինանսական գործիքների: Սկզբնական արժեքը ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին վճարված (վճարվելիք), ստացված (ստացվելիք) դրամական միջոցների չափն է, իսկ ոչ դրամային հատուցման դեպքում՝ հատուցման իրական արժեքը:

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականությունները.

3.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին:

Ակտիվը համարվում է ընթացիկ, երբ

ա) ակնկալվում է այն իրացնել, վաճառել կամ սպառել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ) ակնկալում է այն իրացնել հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում

դ) այն դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք, բացառությամբ երբ դրա փոխանակումը կամ օգտագործումը՝ պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիսների ընթացքում:

Բոլոր այլ ակտիվները համարվում են ոչ ընթացիկ:

Պարտավորությունը համարվում է ընթացիկ, երբ

ա) ակնկալվում է այն մարել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ) ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում

դ) կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ հետաձգելու մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս:

Բոլոր այլ պարտավորությունները համարվում են ոչ ընթացիկ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ծախսերը ներկայացվում են ըստ գործառնության դասակարգմամբ:

Տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է միայն մեկ տարվա համադրելի տեղեկատվություն:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է ուղղակի մեթոդով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում տոկոսների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում շահաբաժինների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես

ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Ֆինանսական հաշվետվություններում էական տեղեկատվությունը ներկայացվում է առանձին:

3.2 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Ինքնարժեքը հաշվարկվում է առաջինը մուտք առաջինը ելք բանաձևով և ներառում է ձեռքբերման արժեքը, վերամշակման ծախսումները և այլ ծախսումները, որոնք անհրաժեշտ են պաշարները գտնվելու վայր հասցնելու և վիճակի բերելու համար: Պատրաստի և անավարտ արտադրանքի ինքնարժեքում ներառվում են նաև արտադրական վերադիր ծախսումները հիմնվելով արտադրական նորմատիվային ցուցանիշների վրա: Արտադրական նորմատիվները հաստատվում են տնօրինության կողմից և ենթակա են պարբերական վերանայման:

Իրացման զուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում հնարավոր վաճառքի գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Կազմակերպությունում արտադրանքը թողարկվում է շարունակական հիմունքով մեծ քանակությամբ, ուստի փոխառության ծախսումները չեն կապիտալացվում:

Պաշարների նյութեր բաժնում ներառվում են նաև այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Դրանք են պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական գույքը, ժամանակավոր կառույցները, հատուկ հագուստը և կոշկեղենը, անկողնային պարագաները, ճաշարանային սպասքը և այլն: Այս ակտիվները ապաճանաչվում են դրանց շահագործումը սկսելու պահին:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների բոլոր դասերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցի միավորի ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող բոլոր այն ծախսումները, որոնք անհրաժեշտ են այն աշխատանքային վիճակի բերելու համար: Սկզբնական արժեքը իր մեջ կարող է ներառել նաև փոխառության ծախսումները (տես փոխառության ծախսումներ բաժինը), ինչպես նաև ապատեղակայման, քանդման, և տեղանքի վերականգնման գնահատված ծախսումների գումարը (տես պահուստներ բաժինը), ինչպես նաև ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը:

Հիմնական միջոցների հետագա ծախսումները՝ ներառյալ նշանակալի մասերի փոխարինման արժեքը ավելացվում են ճանաչված հիմնական միջոցի արժեքին, եթե հավանական է դրա գծով ապագա տնտեսական օգուտների ներհոսք և արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Ամենօրյա սպասարկման ծախսումները՝ ներառյալ մանր դետալների ծախսումները ճանաչվում են ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Հողամասը և շենքերը առանձին ակտիվներ են դիտարկվում և հաշվառվում են առանձին-առանձին, նույնիսկ երբ դրանք ձեռք են բերվում միասին:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը որոշվում է որպես այն գումարը, որով հնարավոր կլիներ վաճառել ակտիվը տվյալ պահին, եթե լիներ այն տարիքի և վիճակի, որն ակնկալվում էր, որ կլիներ դրա օգտակար ծառայության վերջում:

Այն դեպքերում, երբ ակտիվը օգտակար ծառայության վերջում որպես թափոն չունի զգալի արժեք, և գնահատված օգտակար ծառայության ժամկետը գերազանցում է մնացած տնտեսական ծառայության ժամկետի 80%-ը, ապա մնացորդային արժեքը գնահատվում է 0:

Մաշվածության մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով կազմակերպությունը ակնկալում է սպառել ակտիվի տնտեսական օգուտները: Եթե գնահատման պահին տնտեսական օգուտների անհավասարաչափ սպառումը բացահայտ չէ, ապա մաշվածության հաշվարկման

համար օգտագործվում է ուղիղ գծային մեթոդը: Առանձին բաղադրիչների համար կարող է հաշվարկվել առանձին մաշվածություն:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից վերանայվում են հիմնական միջոցների մնացած օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության հաշվառման մեթոդները:

3.4. Ներդրումային գույք

Ներդրումային գույք է համարվում այն գույքը (հող կամ շինություն), որը պահվում է վարձակալությունից և/կամ դրա արժեքի աճից եկամուտ վաստակելու նպատակով: Ներդրումային գույքը սկզբունքորեն չափվում և հաշվառվում է սկզբնական արժեքից հանած կուտակված մաշվածություն և արժեզրկումից կուտակված կորուստներ:

3.5. Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներն ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ձեռնարկատիրական գործունեության միավորմամբ ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերման օրվա իրական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված հետազոտության ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռքբերելու ակընկալիքով, ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված մշակման ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր կամ էականորեն բարելավված նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների ստեղծումը պլանավորելու և նախագծելու համար, ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ միայն այն դեպքում երբ.

- ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել,
- առկա է ակտիվը ավարտուն վիճակի հասցնելու, օգտագործելու կամ վաճառելու տեխնիկական իրագործելիությունը, ղեկավարության մտադրությունն ու կարողությունը,
- ապահովված է մշակումն ավարտելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
- հնարավոր է ցուցադրել այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու ապագա տնտեսական օգուտներ:

Մնացած մշակման ծախսումները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:

Ամորտիզացիան հաշվառվում է գնահատված օգտակար ծառայության ընթացքում ուղիղ գծային մեթոդով, եթե տնտեսական օգուտների անհավասարաչափ սպառումը բացահայտ չէ: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները որոշվում են ղեկավարության կողմից կատարված կանխատեսումների և ֆինանսական պլանավորման հիման վրա: Օգտակար ծառայությունն ու ամորտիզացիոն մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր տարվա վերջում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները 3 – 10 տարի են:

3.6. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների գծով կատարվում է վերլուծություն արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Արժեզրկման հայտանիշի առկայության դեպքում գնահատվում է այդ ակտիվի փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես իրական արժեքից (հանած վաճառքի անհրաժեշտ ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա հոսքերը հաշվարկվում են ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն

արտացոլում է դրամի ժամանակային արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որը սովորաբար կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն է:

Երբ առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, ապա փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական բաշխման հիմունքով, որը սովորաբար հաշվեկշռային արժեքների համամասնությունն է:

Անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվների, անավարտ ոչ նյութական ակտիվների և գուդվիլի արժեզրկումը ստուգվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.7. Արտաժույթ

Կազմակերպության գործունեության ֆունկցիոնալ արժույթ է համարվում ՀՀ դրամը, քանի որ գործունեությունը հիմնականում ծավալվում է ՀՀ տարածքում: ՀՀ դրամն է հանդիսանում նաև կազմակերպության ներկայացման արժույթը:

Արտարժույթով գործառնությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ճանաչման պահի սփոթ փոխանակման փոխարժեքով: Հետագա հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ դրամային հոդվածների մնացորդները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի սփոթ փոխանակման փոխարժեքով: Առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքներում:

Արտարժույթով գործարքների և՛ սկզբնական ճանաչման համար և՛ հետագա վերաչափման համար կիրառվող սփոթ փոխարժեք է համարվում ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

3.8. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի արժեքի մաս: Այլ փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս:

Այն ակտիվն է համարվում որակավորվող, որին անհրաժեշտ է զգալի ժամանակահատված (սովորաբար 6 ամսից ոչ պակաս) որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար:

Փոխառության ծախսումները կարող են չկապիտալացվել, երբ շարունակական հիմունքով արտադրվող պաշարների անկախ արտադրական պրոցեսի տևողությունից և կենսաբանական ակտիվի հետ են կապված:

Կապիտալացվող փոխառության ծախսումները նվազեցվում են բացառապես որակավորվող ակտիվ ձեռքբերելու նպատակով ստացված փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումներից ստացված եկամուտների չափով:

3.9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչներ են համարվում դրամական միջոցները դրամարկղում, դրամական միջոցները ճանապարհին, ցպահանջ հաշիվների մնացորդները, մինչև 3 ամիս մարման ժամկետով հեշտ իրացվելի և ցածր ռիսկային ֆինանսական ներդրումների մնացորդները, ինչպես նաև բանկային

օվեդրաֆտները: Վերջիններիս մնացորդները արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ընթացիկ պարտավորություններ բաժնում:

3.10 Վարձակալություն

ա) Ընկերությունը հանդիսանում է վարձակալ՝

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալական գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես ճանաչվում է սկզբնական արժեքով: «Հետագայում ակտիվի մաշվածքը հաշվարկվում է գծային մեթոդով մինչև ժամկետի ավարտը, եթե ժամկետի ավարտին չի փոխանցվում սեփականության իրավունքները»: Բացի այդ օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումի կորուստների չափով: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով կամ լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով: Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորությունները փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար:

Ընկերությունը հանդիսանում է վարձատու՝.

Ընկերությունը վարձակալությունից եկամուտ ճանաչում է գծային հիմունքով համապատասխան վարձակալության ժամկետում:

3.11. Հաստույթ

Հաստույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաստույթը ներկայացվում է զեղչերի, հետ վերադարձի և քանակային զիջումների ազդեցության ճշգրտված գումարով:

Վաճառքից հաստույթը ճանաչվում է այն պահին, երբ փոխանցվում են սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու հատույցները, ակընկալվում է տնտեսական օգուտների ներհոսք, ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել, չի պահպանվում վերահսկողություն ապրանքների նկատմամբ և հաստույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ռիսկերն ու հատույցները համարվում են փոխանցված այն պահին, երբ ապրանքները ստացվում են հաճախորդի կողմից: Այնուամենայնիվ արտահանումների դեպքում ռիսկերն ու հատույցները փոխանցվում են այն պահին, երբ ապրանքները փոխանցվում են տրանսպորտային կազմակերպությանը, քանի որ սովորաբար այդ ապրանքները ենթակա չեն հետ վերադարձման: Առանձին գործարքներում կարող են սահմանվել հատուկ արտոնյալ պայմաններ, որոնց պատճառով ռիսկերի և հատույցների փոխանցման պահը հետաձգվի:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը գերազանցում է սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում այն դրույքը, որը զեղչում է սպասվող վճարումների գումարը՝ հասցնելով վաճառքի ընթացիկ գնին:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը չի գերազանցում սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում նմանատիպ պայմաններով ֆինանսական գործիքի գերակշռող եկամտաբերության դրույքը:

Մինչև 12 ամիս վճարման ժամկետով իրացումների դեպքում տոկոսների հաշվարկ չի կատարվում և հաստույթը ճանաչվում է հատուցման անվանական արժեքով:

Ծառայությունների մատուցումից հաստույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտվածության աստիճանի հիմունքով: Այն դեպքերում, երբ ավարտվածության աստիճանը հնարավոր չէ չափել, հաստույթը ճանաչվում է միայն կատարված այն ծախսումների չափով, որոնք կփոխհատուցվեն:

Այն դեպքերում, երբ դա հնարավոր է ավարտվածության աստիճանը որոշվում է կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների հարաբերակցությամբ: Մնացած դեպքերում ավարտվածության աստիճանը որոշվում է տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

3.12. Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում, որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները, որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սիստեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա:

3.13. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ ճանաչում

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա)ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ)հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ.

գ)պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.14. Էական սխալներ

Էական սխալներ՝ ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներ են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ մեկ կամ ավելի ժամանակշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս արժանահավատ համարվել, իրենց ներկայացման թվի դրությամբ:

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց վերահաշվարկելով նախորդող ժամանակաշրջանի համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը:

3.15. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական ակտիվը ճանաչում է , երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները:

Դասակարգում և հետագա չափում. Չափման կատեգորիաներ

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները.

ա) ամորտիզացված արժեքով չափվող

բ) իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,

գ)իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

ա)ֆինանսական ակտիվը պահում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման համար ֆինանսական ակտիվների պահելը, և

բ)ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

ա) ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքի հավաքման միջոցով, թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելով,

բ) ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, բացառությամբ երբ այն չափվում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

Ամորտիզացված արժեքի չափման համար կիրառվում է արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումն կախված է (i) ակտիվների պորտֆելի կառավարման համար Ընկերության բիզնես մոդելից, և (ii) ակտիվի դրամական հոսքերի բնութագրերից:

Դասակարգման և հետագա չափում. Բիզնես մոդել

Բիզնես մոդելը այն եղանակն է, որն օգտագործելով Ընկերությունը կառավարում է ակտիվները՝ դրամական հոսքեր ստանալու համար, արդյոք ընկերության նպատակն է (i) ակտիվներից միայն պայմանագրային դրամական հոսքերի ստացումը («ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի ստացման համար») կամ (ii) պայմանագրային դրամական հոսքերի և ակտիվների վաճառքից առաջացող դրամական հոսքերի ստացումը(«ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի և վաճառքի համար»), կամ, եթե կիրառելի չէ ոչ (i) կետը և ոչ էլ (ii) կետը, ֆինանսական

ակտիվները դասակարգվում են որպես «այլ» բիզնես մոդելների մաս և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Դասակարգում և հետագա չափում, դրամական հոսքերի հատկանիշներ

Եթե բիզնես մոդելը նախատեսվում է ակտիվների պահում պայմանագրային դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրային դրամական հոսքերի ստացման և վաճառքի համար, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք դրամական հոսքերը ներկայացնում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումները:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ամբողջությամբ փոփոխվում է այդ պորտֆելի կառավարման բիզնես մոդելը: Վերադասակարգումը իրականացվում է առաջընթաց՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից:

Արժեզրկում-ակնկալող պարտքային կորուստների գնահատված պահուստը

Ակնկալվող կորուստների պահուստի չափումն արտացոլում է՝

ա) անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումար, որը որոշվում է՝ գնահատելով հնարավոր արդյունքների տիրույթը,

բ) փողի ժամանակային արժեքը, և

գ) անցյալ դեպքերի, ընթացիկ պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների վերաբերյալ ողջամիտ և հիմնավորվող տեղեկությունը, որը հասանելի է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի:

Շահույթի կամ վնասում, որպես արժեզրկումից օգուտ կամ կորուստ, ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (կամ դրանց հակադարձումների) այն գումարը, որն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետու ամսաթվի դրությամբ կորուստի պահուստը ճշտգրվի մինչև այն գումարը, որը պահանջվում է ճանաչել:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստը:

Դուրս գրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքներն անհիմն են: Դուրս գրումն իրենից ներկայացնում է ապաճանաչում:

Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարգևատրումները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում

Առևտրային դեբիտորական պարտքերը

Առևտրային դեբիտորական պարտքերը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներն են:
Դեբիտորական պարտքերը չափվում են գործարքի գնով, բացառությամբ այն դեպքերի, երբ դեբիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալից բաղադրիչ:
Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:
Տրված փոխառությունները
Տրված փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացիոն արժեքով, կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը:
Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը
(վնասը) ճանաչվում է շահույթում կամ վնասում:
• սեփական կապիտալում, եթե ֆինանսական ակտիվը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները

Դրամական միջոցները դրամարկղում միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով:

Բաժնային գործիքներ

Որպեսզի ներդրումները որակավորվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են ընկերության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը, և որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվություններում ներառում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:
Որպես պարտավորություն կամ սեփական կապիտալ դասակարգումը ընկերության կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են կամ որպես ֆինանսական պարտավորություններ, կամ էլ որպես սեփական կապիտալ՝ պայմանագրային համաձայնության բովանդակությանը և ֆինանսական պարտավորության ու բաժնային գործիքի սահմանումներին համապատասխան:
Ընկերության կողմից թողարկված բաժնային գործիքները ճանաչվում են ստացված մուտքերի հիման վրա՝ հանած թողարկմանը ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Ֆինանսական պարտավորություններ

Դասակարգում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող, և իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով:
Առևտրական կրեդիտորական պարտքերը, ստացված վակերը և փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ են:
Առևտրական կրեդիտորական պարտքեր
Սկզբնական ճանաչման պահին առևտրական կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով, բացառությամբ այն դեպքի, երբ կրեդիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է

• Որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը բաժնետերերի ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպություններիգծով է, և

• Շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական պարտավորությունը այլ կողմերի գծով է:

Անտոկոս և ցածր տոկոսով ցպահանջ վարկերի և փոխառությունների իրական արժեք է համարվում՝ դրանց անվանական արժեքը, քանի որ դրանք ենթակա են մարման ցանկացած պահի հնարավորության առկայության դեպքում և ակնկալվում է մարել շատ կարճ ժամանակահատվածում: Այդ դեպքում փոխառությունների և վարկերի զեղչման ազդեցությունը աննշան է և զեղչում չի կատարվում:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառություններն չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են զուտ գումարով այն դեպքում, երբ Ընկերությունը՝

ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և

բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

4.1 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Հողամասեր	Շենքեր	Շահագործման մեջ չգտնվող հմ	Մեքենաներ և սարքա-վորումներ	Տրանսպոր-տային միջոցներ	Արտադրա-կանտեսական	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	**17 032**	**401 814**	**590 069**	**1 629 035**	**562 811**	**35 058**	**857 007**	**4 092 826**
Ավելացումներ այդ թվում				19 693		1 641	4 993	26 327
վերագնահատումից								
Նվազեցումներ								
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	**17 032**	**401 814**	**590 069**	**1 648 728**	**562 811**	**36 699**	**862 000**	**4 119 153**
Ավելացումներ այդ թվում				31 123	11 583		63 534	106 240
վերագնահատումից								
Նվազեցումներ							23 171	23 171
Առ 31 դեկտեմբեր 2025թ.	**17 032**	**401 814**	**590 069**	**1 679 851**	**574 394**	**36 699**	**902 363**	**4 202 222**
Կուտակված մաշվածություն								

Առ 31 դեկտեմբեր 2023թ.		**308 555**		**888 874**	**347 073**	**28 761**	**522 685**	**2 095 948**
Տարվա մաշվածություն այդ թվում					7 448		13 232	**20 682**
վերագնահատումից								
Նվազեցումներ								
Առ 31 դեկտեմբեր 2024թ.		**308 555**		**888 874**	**354 521**	**28 761**	**535 917**	**2 116 628**
Տարվա մաշվածություն այդ թվում				2 806	2 528	814	913	**7 063**
վերագնահատումից								
Նվազեցումներ								
Առ 31 դեկտեմբեր 2025թ.		**308 555**		**891 680**	**357 049**	**29 575**	**536 830**	**2 123 689**
Զուտ հաշվեկշռային արժեք								
Առ 31.12.2024	**17 032**	**93 259**	**590 069**	**759 854**	**208 290**	**7 938**	**326 083**	**2 002 527**
Առ 31.12.2025	**17 032**	**93 259**	**590 069**	**788 171**	**217 345**	**7 124**	**365 533**	**2 078 533**

Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվը իրենից ներկայացնում է ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում, այդ թվում 91 445,0հազ.դրամ դուստր ընկերությունում, արը գտնվում է Արցախի Հանրապետությունում:

4.2 Պաշարներ

		Հազար դրամ
	31.12.2025թ	31.12.2024թ
Հումք և նյութեր	75 602	75 879
Ապրանքներ	342 053	602 378
Ընդամենը	**417 655**	**678 257**

2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունը չունի գրավադրված պաշարներ

4.3 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

		Հազար դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, այդ թվում	1 306 420	2 523 446
1. Տրված կանխավճարներ	1 050 850	1 185 059
2. Առևտրային դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	232 696	1 308 288
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով		
4. Առևտրային դեբիտորական պարտքեր ասոցացված կազմակերպությունների գծով		
5. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	14 251	21 476
· ԱԱՀ	0	16 652
· Եկամտահարկ		

· Գույքահարկ		
· Հողի հարկ		
·Այլ պարտադիր վճար	5 629	4 824
6. Այլ դեբիտորական պարտքեր	8 623	8 623

Առևտրային դեբիտորական պարտքերը կարճաժամկետ են չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ և չափվում են գործարքի գնով: Առևտրային դեբիտորական պարտքերը 31.12.2023թ-ի դրությամբ արժեզրկման պահուստ չի ստեղծվել, քանի-որ պայմանագրային կողմ հանդիսացող գործընկերները ժամանակին մարում են իրենց պարտքերը և ղեկավարության համոզմամբ, ընկերությունը չի կարող ունենալ ֆինանսական կորուստներ:

4.4 Դրամական միջոցներ

		Հազար դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Դրամարկղ	5 324	1 298
Բանկային հաշիվներ	14 129	25 683
Ընդամենը	**19 453**	**26 981**

4.5 .Սեփական կապիտալ

4.5.1 Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումարը

4.5.1 *Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 56 250,0 հազ.դրամ, որը բաղկացած է 15 հատ անվանական հասարակ բաժնետոմսերից: Յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 3 750 000 դրամ: Չվճարված բաժնետոմսեր չկան:*

Բաժնետոմսերի 83,09 տոկոսը պատկանում Արթուր Մելքոնյանին, 1,029% `Դիագնոստիկա »ԲՄ ԲԲԸ-ին, իսկ մնացած 15,881%-ը պատկանում թվով է 25 ֆիզիկական և 2 իրավաբանական անձանց

4.5.2 Ետ գնված բաժնետոմսեր չկան

4.5.3. *2023թ ընթացքում հայտարարվել և վճարվել է 58 320,0 հազ.դրամի չահաբաժին:*

4.6 Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ

4.6.1. Կարճաժամկետ վարկեր

				Հազ.դրամ
	31.12.2025թ		31.12.2024թ	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	**290 513**	**290 513**	**810 358**	**810 358**
Ստացվել է տարվա ընթացքում	545 178	545 178		
Մարվել է տարվա ընթացքում	815 613	815 613	519 845	519 845
Մնացորդը տարեվերջին	**20 078**	**20 078**	**290 513**	**290 513**

4.6.2. Կարճաժամկետ փոխառություններ

				Հազ.դրամ
	31.12.2025թ		31.12.2024թ	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	**558 103**	**558 103**	**609 825**	**609 825**
Ստացվել է տարվա ընթացքում	1 042 000	1 042 000	41 000	41 000
Մարվել է տարվա ընթացքում	173 867	173 867	92 722	92 722
Մնացորդը տարեվերջին	**1 426 236**	**1 426 236**	**558 103**	**558 103**

4.7 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

		Հազար դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում	**718 639**	**2 796 549**
1. Ստացված կանխավճարներ	504 392	2 128 682
2. Առևտրային կրեդիտորական պարտքեր գնումների գծով	71 466	534 031
3. Առևտրային կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	33 055	30 253
5. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	34 311	48 515
· ԱՄՀ	7 513	
· Եկամտահարկ	19 723	18 759
· Շահութահարկ	5 761	28 511
· Գույքահարկ		
· Հողի հարկ		
·Այլ պարտադիր վճար	1 314	1 245
6. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	71 133	53 932
7. Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց.ապ.գծով	4 282	3 420
8. Այլ կրեդիտորական պարտքեր		

Առևտրային կրեդիտորական պարտքերը կարճաժամկետ են, չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ և չափվում են գործարքի գնով: Ընկերությունը ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

4.8 Հասույթ

		Հազ,դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Արտադրանքի իրացումից	2 806 358	3 413 756
Հիմական միջոցների վաճառքից եկամուտ		
Ծառայությունների մատուցում	83 804	40 170
Ընդամենը	**2 890 162**	**3 453 926**

4.9. Վաճառքի ինքնարժեք

		Հազ,դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Փոխհատուցումներ աշխատակիցներին	486 124	680 324
Մաշվածության ծախս	4 534	12 972
Նյութական ծախսեր	1 323 826	1 317 587
Այլ ծախսեր	520 951	307 361
Ընդամենը	**2 335 435**	**2 318 244**

4.10.Այլ եկամուտներ

		Հազ,դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Հիմական միջոցների օտարումից եկամուտ		
Ֆինանսական ներդրումներից եկամուտ	290	6 584
Գործառնական վարձակալությունից եկամուտ		
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում		
Այլ եկամուտներ	5 690	5 892
Ընդամենը	**5 980**	**12 476**

4.11 Վարչական և այլ ծախսեր

		Հազ.դրամ
	2025թ.	**2024թ.**
1. Վարչական ծախսեր, այդ թվում	**271 415**	**330 187**
Փոխհատուցում աշխատակիցներին	237 636	289 505
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր	2 528	7 709
Գործուղման , ներկայացուցչական և վերապատրաստման ծախսեր	3 461	
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2 101	2 119
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	5 118	6 965
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1 250	3 331
Բանկային, ապահովագրության, պահպանության և տրանսպորտային ծախսեր		778
Չփոխհատուցվեղ ծախսեր՝ հարկեր, տուրքերից	8 229	6 791
Վարչական այլ ծախսեր	11 092	12 989
2. Իրացման ծախսեր	**0**	**0**
Փոխհատուցում աշխատակիցներին		
Պահեստում գտնվող արտադրանքի,ապրանքների փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսեր		

Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովագրության ծախսեր		
Տրանսպորտային և բեռնափոխադրման ծախսեր		
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր		
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		
250Մարկետինգի և գովազդի ծախսեր		
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		
Գործառնական վարձակալությունից ծածսեր		
Այլ իրացման ծախսեր		
3. Գործառնական այլ ծախսեր	**24 407**	**526 944**
Պաշարների վաճառքից օգուտներ		
Անհուսալի դեբիտորական պարտքի դուրս գրում		
Պաշարների օտարումից ծախսեր		
Վարձակալության ծախսեր		
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր		459 207
Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, խոտանված ապրանքի հետ կապված ծախսեր		
Գործառնական այլ ծախսեր	24 407	67 737
4. Այլ ոչ գործառնական ծախսեր	**830**	**4 719**
Ակտիվների վերագնահատումից և վերաչափումից ծախս		
Հիմնական միջոցների օտարումից վնաս		
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսումներ	830	2 445
Փոխարժեքային տարբերությունից վնաս		2 274
Այլ ծախսեր		
Ընդամենը	**304 882**	**861 850**

4.12 . Ֆինանսական ծախսեր

		Հազ.դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Ֆինանսական վարձակալության հետ կապված հաշվեգրված տոկոսներ		
Ստացված փոխառությունների հետ կապված հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը		

4.13.Շահութահարկ

4.13. 1 Շահութահարկի գծով ծախս

		Հազ.դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Ընթացիկ հարկ	47 511	51 050
Հետաձգված հարկի գծով ծախս		
Հետաձգված հարկի գծով եկամուտ		
Ընդամենը	**47 511**	**51 050**

5. Ֆինանսական գործիքներ

5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայավցած են ծանոթագրություն 3.15-ում

5.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերվում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին

- **Ֆինանսական ակտիվներ**

		Հազար դրամ
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1 306 420	2 501 969
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	19 453	26 981
ԸՆդամենը	**1 325 873**	**2 528 950**

- **Ֆինանսական պարտավորություններ**

		Հազար դրամ
	31.12.2025	**31.12.2024**
Վարկեր և փոխառություններ	1 426 237	848 616
Առևտրային կրեդիտորական պարտքեր	684 328	2 750 318
ԸՆդամենը	**2 110 565**	**3 598 934**

6. ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությունները

Ընկերությունը իր գործունեության ընթացքում ենթարկվում է պարտքային և իրացվելության ռիսկերի:

7.Ֆինանսական ռիսկի գործոններ

7.1.Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

7.2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը վերաբերում է Ընկերության կողմից իր պարտավորությունները ժամանակին մարելուն և անմիջականորեն կապված է Ընկերության դրամական միջոցների հավաքագրման հետ, ինչը նկարագրված է վերը նշված պարտքային ռիսկերում:

8. Իրական արժեք

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որոնք չեն չափվում իրենց իրական արժեքով, իրենցից ներկայացնում են առևտրային դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, դրամական միջոցները, վարկերը և ստացած փոխառությունները, առևտրային և կրեդիտորական պարտքերը: Դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես հավասարվում են հաշվեկշռային արժեքին, հաշվի անելով դրանց կարճաժամկետ բնույթը:

9. Պայմանականություններ

9.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել բնակչությունից դեբիտորական պարտքերի ժամանակին հավաքագրումը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթ ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

10. Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների և գործունեության ընդհատման արդյունքում հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում:

Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա է են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:
Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

12. *Իրավական պարտավորություններ*

Առ 31 դեկտեմբերի 2023թ-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվության հաստատման ժամանակարգերը ընկերությունը ներգրված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական հաշվարկների վրա:

13. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքերը

Ի լրումն Ռուսաստանում և տարածաշրջանում քաղաքական և տնտեսական զարգացումների, ղեկավարությունը հետևում է տնտեսական և քաղաքական իրավիճակների ընթացիկ փոփոխություններին, ձեռնարկում է միջոցներ, որոնք անհրաժեշտ են Ընկերության գործունեության կայունությունը և զարգացումը ապահովելու համար: Թեև այս զարգացումների արդյունքը դժվար է կանխատեսել ղեկավարությունը համոզված է, որ Ընկերության գործառնությունները նշանակալի բացասական ազդեցություն չեն ունենա:

14. Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա է վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:
Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

15. Կապակցված կողմեր և գործարքներ նրանց միջև

15.1 .1. Վերահսկողության փոխահարաբերություն

Ընկերությունը մայր, դուստր, ասոցացված կազմակերպություն չունի և չի վերահսկվում (այդ թվում նշանակալից ազդեցության) այլ կազմակերպության կողմից:
Ընկերության մասնակիցներն են հանդիսանում՝ Սամվել Գալստյանը՝8.47 % , Գագիկ Գալստյանը՝74.33%, Գրիգոր Գալստյանը՝17.2%:
Մասնակիցների հետ կապված գործարքները ներկայացված են ստորև՝

15.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են անձնակազմի գծով ծախսումներում (տես ծանոթագրություն 5).

Անվանում	Հաշիվ	Սկզբ. մն. դեբետ դրամով	Շրջ. դեբետ դրամով	Շրջ. կրեդիտ դրամով	Վերջ. մն. կրեդիտ դրամով
Գալստյան Գագիկ	2311	10 617 517	0	10 617 517	0
Գալստյան Գագիկ	513		173 866 936	1 042 000 000	868 133 064
		10 617 517	**173 866 936**	**1 052 617 517**	**868 133 064**

01.01.2025-31.12.2025			
	Գումար	**Անվանում**	**Մեկնաբանություն**
1	123 000 000	Գալստյան Գագիկ	Շահաբաժին
2	8 000 000	Գալստյան Գրիգոր Գագիկի	Շահաբաժին
3	3 500 000	Գալստյան Սամվել Սաշաբեկի	Շահաբաժին
	134 500 000		

01.01.2025-31.12.2025			
	ԱՎՈՒՄ	**Առձեռն**	**Անվանում**
1	7 452 900	5 866 800	Գալստյան Գագիկ
2	22 824 000	17 018 400	Գալստյան Գրիգոր Գագիկի
3	5 387 600	4 248 400	Գալստյան Սամվել Սաշաբեկի
	35 664 500	**27 133 600**	

Տնօրեն՝ *Ա. Խաչատուրյան*
Գլխ. հաշվապահ՝ *Գ. Դավթյան*

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ ապրիլի 22 -ին